
**ՁԵՎԱՐՆՉՈՒՅԹԻ ԵՎ ՁԵՎԱՐՆՉՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԸ**

Վ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լեզվաբանության բաժնի կամ ենթաբաժնի տարբերակումը նախ և առաջ ենթադրում է ուսումնասիրության համապատասխան իրականության, մասնավորապես՝ միավորի տարբերակում: Սակայն որոշ դեպքերում եթե առարկություն չի հարուցում (կամ գրեթե չի հարուցում) լեզվաբանության բաժնի (ենթաբաժնի) առանձնացումը, որովհետև հստակորեն ուրվագծվում են նրա ուսումնասիրության նյութի սահմանները, ապա շատ դժվար է ճշտել տվյալ բաժնի միավորի կառուցվածքային չափորոշիչները: Նման դեպքերում երբեմն խոսվում է համապատասխան կադապարային տիպի կամ բաղադրիչների դասի մասին:

Դրությունն այդպես է, օրինակ, բառակազմության ոլորտում¹: Նմանօրինակ իրավիճակ առկա է նաև ձևահնչության և ձևահնչության հասկացությունների ըմբռնման շուրջ: Ձևահնչության՝ իբրև կառուցվածքային բնութագրով տարբերակվող լեզվական միավորի գոյությունն ընդունել են քչերը: Ձևահնչության՝ որպես լեզվաբանության բաժնի և ձևահնչության՝ որպես այդ բաժնի հիմնական միավորի հասկացությունները հիմնավորելու փորձ է արել Ն. Ս. Տրուբեցկոյը²: Վերջինս ձևահնչության բանության քննության նյութ է համարել հնչության թուրք տիպի հերթագայությունները՝ համապատասխանաբար ձևահնչության համարելով միևնույն

¹ Տե՛ս *Общее языкознание (внутренняя структура языка)*. М., 1972, էջ 344-386, **Ф. М. Березин**, **Б. Н. Головин**, *Общее языкознание*, М., 1979, էջ 159-172: Եթե առաջին աշխատության հեղինակները նշում են, որ «լեզվի մասին գիտության մեջ նպատակահարմար է առանձնացնել նաև այնպիսի բաժիններ, որոնք ուղղակի համապատասխանություն չեն գտնում լեզվի մակարդակային բաժանման մեջ» (տե՛ս նշվ. աշխ., էջ 344), ապա երկրորդի հեղինակներն առաջարկում են «բառակապակցական տիպի» գաղափարը (տե՛ս նշվ. աշխ., էջ 166):

² Ձևահնչության տերմինն առաջին անգամ գործածել է լեհ լեզվաբան Հ. Ուլաշինը 1927թ.՝ այդ տերմինով նշանակելով իմաստային-ձևաբանական գործառույթով հնչույթը, որն այդպիսի բնութագրով շատ մոտ է հնչույթի ըմբռնումին ըստ Մոսկովյան հնչույթաբանական դպրոցի (ՄՀԳ): Ուլաշինի համապատասխան հոդվածը լույս է տեսել 1931-ին՝ «Պրահայի խմբակի լեզվաբանական աշխատությունների» 4-րդ պրակում՝ գերմաներենով՝ «Հնչյուն, հնչույթ, ձևահնչույթ» («Laut, Phonema, Morfonema») վերառությամբ: 1929-ին ձևահնչության տերմինը գործածել է Ն. Ս. Տրուբեցկոյը «Ձևահնչության բանության» մասին՝ հոդվածում, որը ևս հրատարակվել է նշված պարբերականում՝ ֆրանսերենով (տե՛ս **N. S. Troubetzkoy**, *Sur la morphologie*, TCLP, 1929, t. 1): Նա ձևահնչության տերմինով նշանակել է միանգամայն տարբեր իրողություն (այդ մասին տե՛ս բուն շարադրանքում):

ձևային բառակազմական և ձևաբանական տարբերակների (ձևակների) կազմում գործառող հնչույթների ամբողջությունը: Հասկանալի է, որ ձևահնչույթի ըմբռնումն ըստ Տրուբեցկոյի պայմանավորված է առաջին հերթին հնչույթի գործառական բնորոշումով՝ որպես ձևային (բառի) կազմում իմաստատարբերակիչ դեր կատարող միավորի:

Վ. Ի. Գեորգիևը ձևահնչույթ տերմինով նշանակել է «քերականական իմաստ ունեցող հնչույթները», այլ կերպ՝ միահնչույթ քերականական ձևայինները (հմմտ. ы-ն ուսերենի рабы, е-ն՝ книге, а-ն հայերենի աղջկա, ու-ն՝ մարդու բառաձևերում)³:

Ուրիշները, ընդունելով ձևահնչույթաբանական տիպի հերթագայությունների առկայությունը մասնավորապես թերական լեզուներում, մերժում են ձևահնչույթի՝ որպես իրականում գոյություն ունեցող լեզվական միավորի գոյությունը՝ նրա տարբերակումը համարելով «արհեստական» և «նկարագրման պարզությամբ չարդարացված»: Այդպես մտածողների պատկերացումներն էլ տարբերվում են բուն ձևահնչույթաբանական հերթագայության տիպի տարբերակման հարցում⁴:

³ Տե՛ս **В. И. Георгиев**, Фонематический и морфематический подход к объяснению флексии славянских языков // Вопросы языкознания (այսուհետ՝ ВЯ), 1968, № 4, էջ 33: Հմմտ. նաև. «Ի տարբերություն սովորական հնչույթների, ձևահնչույթները կրում են որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն, ըստ որի էլ բոլոր մյուս ձևայինների հետ լեզվական կառուցվածքի ստորակարգության մեջ պատկանում են ավելի բարձր իմաստային մակարդակին» (նույն տեղում):

⁴ Ձևահնչույթի ռեալությունը մերժում են, օրինակ, Կասևիչը, որը իրեն համարում է շչերբայական հնչույթաբանական սկզբունքների (իմա՝ Լենինգրադյան հնչույթաբանական դպրոցի - ԼՀԴ) հետևորդ (տե՛ս **В. Б. Касевич**, Морфонология, Л., 1986, էջ 97-98), գործառական հնչույթաբանության մոսկովյան դպրոցի ներկայացուցիչ Ա. Ա. Ռեֆորմատսկին (վերջինիս կարծիքով՝ «ձևահնչույթի գաղափարը ոչ անհրաժեշտ գաղափար է», **А. А. Реформатский**, О соотношении фонетики и грамматики (морфологии) // Из истории отечественной фонологии, М., 1970, էջ 406), Ս. Բ. Բեռնշտեյնը, որը, ըստ էության, նշված դպրոցներից և ոչ մեկի ուղղակի հետևորդը չէ («Ձևահնչույթաբանության պատմության մեջ բացասական դեր է խաղացել նաև փաստականորեն գոյություն չունեցող միավորի՝ ձևահնչույթի առանձնացումը», տե՛ս **С. Б. Бернштейн**, Введение в славянскую морфонологию, ВЯ, 1968 № 4, էջ 59): Ընդհակառակը, ձևահնչույթի գաղափարն ընդունել են, օրինակ, Լ. Ռ. Չինդերը (ԼՀԴ, տե՛ս **Л. Р. Зиндер**, Общая фонетика, М., 1979), Ս. Հալլեն, որ ներկայացնում է դեկրիպտիվ լեզվաբանությունը (տե՛ս **М. Халле**, Фонологическая система русского языка. Лингвистико-акустическое исследование, // Новое в лингвистике, вып. II, М., 1962, էջ 299-339), Չ. Հառիար, որ նույն՝ դեկրիպտիվ ուղղության ներկայացուցիչներից է (տե՛ս **Ю. С. Степанов**, Основы языкознания, М., 1966, էջ 111-112), Ե. Ա. Չեմսկայան (տե՛ս **Е. А. Земская**, Современный русский язык, Словообразование, М., 1973):

Ձևահնչույթաբանական հերթագայությունների լայն ըմբռնում ունեն, օրինակ, Ն. Ս. Տրուբեցկոյը, Վ. Բ. Կասևիչը, Ս. Բ. Բեռնշտեյնը, Ե. Ա. Չեմսկայան (իհարկե, դրանով հանդերձ, նրանց պատկերացումները չեն նույնանում), ընդհակառակը, Ա. Ա. Ռեֆորմատսկին ունի ձևահնչույթաբանական հերթագայությունների նեղ ըմբռնում. նա այդպիսին է համարում միայն պատմական հերթագայությունները («... բուն ձևահնչույթաբանության մեջ կարող են մնալ միայն ավանդական հերթագայությունները, որոնք օժտված չեն քերականական նշանակությամբ»), ինչպես՝ бегу//бежишь, село//сельский, конь//конский, палець // запальный, сон//сна (տե՛ս նշվ. աշխ.):

Չևահնչությաբանական իրողությունների առնչությամբ արտահայտված տեսակետների ուսումնասիրությունից նկատելի է, որ՝ 1) ի տարբերություն, օրինակ, գերհնչությի գաղափարի, որի դեպքում լեզվաբանի դիրքորոշումն ուղղակիորեն պայմանավորված է հնչությաբանական ընթնումով առհասարակ, ձևահնչությի դեպքում այդ վերաբերմունքն առավելապես անհատական բնույթ ունի։ 2) ձևահնչությաբանական հերթագայությունների բնույթի և ընդգրկման սահմանների մասին պատկերացումները ևս հաճախ զգալիորեն տարբեր են։

Հնչությային հերթագայությունները ձևային և բառերի (բառաձևերի) կազմում ունեցած գործառնության տեսանկյունից լինում են 3 տեսակ՝ 1) բառակազմական գործընթացներին ուղեկցող հերթագայություններ. հմմտ. *ռուս. пеку-печь, река-речной (к/ч), дичь-дикий, (ч/к), бег-бежать, ног-ножка-нажать (г/ж), друг-другья-дружеский (г/з/ж),* - ժ. հյ.՝ տուգանք-տուժել (զ/ժ), կին-կանացի (ի/ա), ջուր-ջ(ը)րկիր, սուր-ս(ը)րել (ու/ը), ծանոթ-ճանաչել (ծ/ճ), իդ-ըդալի, (ի/ը), դարձ-դառնալ (ր/ն), աղաչել-աղոթք (չ/թ), ձեռք-ձեռքազատել (ռ/ր),- գրք.՝ քույր-քեռ (ր/ն), վեց-վեշտասան (ց/շ) և այլն։ 2) քերականական (ձևաբանական) գործընթացներին ուղեկցող հերթագայություններ. հմմտ. *ռուս. писать-пишу (с/ш), сон-сна (о/∅), пень-пня, день-дня (е/∅), лечь-лягу (ч/г), село-сёла, звезда-звёзды (е/ю),* - ժ. հյ.՝ կին-կ(ը)նոջ, գիրք-գ(ը)րքի (ի/ը), դուստր-դ(ը)ստեր, ջուր-ջ(ը)րի (ու/ը), առու-առվի, բու-բվի, լեզու-լեզվի (ու/վ) և այլն,- գրք.՝ գրեցից-գրեսցուք/գրեսցիք, վազեցից-վազեսցուք/ջիք, հայեցայց (նայելու են)-հայեսցուք (նայելու ենք)/- ջիք (նայելու եք) (ց/ս), ֆրանս.՝ lire-lisons, dire-disons, rire-risons (r/z)։ 3) քերականական (ձևաբանական) իմաստ արտահայտող հերթագայություններ. հմմտ. *ռուս. называть-назвать, вызывать-вызвать, (ы/∅), убежать-убежать (г/ж), лечь-лежать (ч/ж),* - ժ. հյ.՝ տուն-տան, շուն-շան (ու/ա), հոգի-հոգու, ոսկի-ոսկու, գարի-գարու (ի/ու),- գրք.՝ -ար-արու (∅/ու), այր-առն (ր/ն), կայս(ը)ր-կայսեր, աստ(ը)ղ-աստեղ, կոճ(ը)ղ-կոճեղ (ը/ե), հարս(ը)ն-հարսունք (ը/ու), անձ(ը)ն-անձինք (ը/ի), դուռ(ը)ն-դրանց (ը/ա), տամ-ետու, ետ (ա/ու/∅) և այլն,- անգլ.՝ goose-geese «սագ-սագեր», tooth-teeth «ատամ-ատամներ» (u:/i:), man-men «մարդ-մարդիկ» (æ/e), woman-women ([wʊmən] // [wɪmɪn]) «կին-կանայք» (ə/i) և այլն։

Նշված բոլոր հերթագայություններն էլ, անկախ բառակազմական և ձևաբանական գործընթացներում նրանց ունեցած դերակատարությունից, մասնակցում են ձևային կիրառական որևէ տարբերակի, այն է՝ ձևակի (морф կամ алломорф) առաջացմանը, ինչպես՝ [пек-/печ-], [ног-/нож-], [кին-/կան-], [դար-/դառ-], [пис-/пиш-], [сон-/сн-], [назыв-/назв-], [lir-/liз-], [աստըղ-/աստեղ-], [վոսկի/վոսկու], [շուն/շան], [tu:θ/ti:θ] (tooth/teeth), [maen/men] (man/men) և այլն։ Հետևաբար, ձևակազմության և վերջին հաշվով՝ ձևային բաղադրման տեսանկյունից նրանց միջև սկզբունքային տարբերություն չկա։ Ինչպես առաջին (հմմտ. бег-/беж-, ног-/нож-(ка), կին-/կան-, ծան-/ճան- և այլն), այնպես էլ երկրորդ տիպի (հմմտ. пис-/пиш-, կին-/կրն-, գիր/գ(ը)ր-, lir-/liz- և այլն) հերթագայությունների բաղադրիչները՝ հերթագայիչները, համապատասխան ձևայինների կազմում ունեն միայն ձևակազմիչ դեր։ Այդ առումով նրանք տարբերվում են

սովորական հնչույթներից: Ի տարբերություն վերջինների, որոնք ունեն ոչ միայն իմաստաբաղադրիչ, այլև (հենց դրանով պայմանավորված)՝ իմաստատարբերակիչ դեր և հակադրություն են ձևավորում, միևնույն հերթագայության բաղադրիչները մեկը մյուսի հարաբերությամբ այդպիսի հակադրություն չեն ձևավորում (հմմտ. *г/ж, г/з/ж, к/ч, ու/ը, ի/ը, ի/ա, օ/Օ, ց/Օ, ր/Յ* հերթագայությունները մասնակցում են, համապատասխանաբար, *бег-/беж-(ать), друг-/друг-(я)-/друж-(ить), рук-(а)/руч-(ной), дик-(ий)/дич-(ь), зюп-/з(ը)п-(п), գիր-/զ(ը)п-(ել), կին-/կան-, сон-/сн-(а), ден-(ь)/дн-(я), [dir]-(е)/[diз]-(оns)* ձևակների ձևավորմանը. ըստ այդմ էլ նշված ձևակները միմյանց հետ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ): Ավելին, հերթագայական համալիրը, ըստ էության, լեզվական համակարգում ունեցած գործառույթի տեսանկյունից համարժեք է սովորական հնչույթին: Այսպես, *hj. зюп-* և *з(ը)п-(կիր)* ձևակները միմյանց նկատմամբ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, ինչը ձևավորվում է *ու/ը* հնչույթային հերթագայության միջոցով, իսկ *зюп-(կամ з(ը)п- <зюп-)* և *зեր(մ)-/ջեռ-(ուցում)* ձևակները միմյանց նկատմամբ գտնվում են հակադրական հարաբերության մեջ, որովհետև նրանք միևնույն ձևույթի տարբերակներ չեն, այլ միանգամայն տարբեր բնիմաստ ունեցող լեզվական բաղադրիչներ: Այդ ձևակների հակադրությունը պայմանավորված է մի կողմից՝ *ու/ը* հերթագայական համալիրի (և ոչ թե միայն ու-ի կամ միայն ը-ի), մյուս կողմից՝ Ե հնչույթի իրականացրած իմաստատարբերակիչ գործառույթով:

Նույնը կարելի է ցույց տալ ռուսերենում: Այսպես, *возить* և *вожу* բառաձևերում առկա են միևնույն *во<з/ж>*- ձևույթի դիրքային տարբերակները՝ *воз-* և *вож-* ձևակները՝ «տանել, կրել» ընդհանուր նշանակություններով: *Вода* «ջուր» գոյականի կազմում կա *вод-/в/д/* արմատական ձևակը: Եթե *воз-/вож-* ձևակները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, *вод-* ձևակի հետ նրանք ձևավորում են հակադրական բաշխում: Հետևաբար, եթե մի կողմից՝ առկա է *з/ж* հերթագայություն, ապա մյուս կողմից՝ առկա է *<з/ж>* և *<д>* հակադրություն:

Երրորդ տիպի հերթագայությունները վերաբերում են ձևաբանական համակարգին: Նրանք կազմավորում են բառույթի քերականական տարբերակներ՝ բառաձևեր և անմիջականորեն քերականական (հոլովական կամ խոնարհման) իմաստների կրողներ են: Հմմտ. *называть/назвать*-անկատար և կատարյալ կերպեր, *река/реки*, հոգի/հոգու, աստ(ը)ղ/աստեղ, դուռ(ը)ն/դրան⁵-անվանական և սեռ.(տր.) հոլովներ, *tooth/teeth, man/men*-եզ. և հոգն. թվեր, տամ-ետու-ետ- կատարյալի խոնարհման ձևեր (եզ. թ., I, II, III դ.), գրեցից-գրեսցուր- (ստորադասական) երկրորդ ապառնու ձևեր են: Գործառական առումով այս տիպի հերթագայությունների և առաջին երկու տիպի հերթագայությունների միջև կա որակական տարբերություն: Ինչպես արդեն ասվել է, առաջիններն ինքնին նշանակության կրող չեն. տարածմանակյա հայեցակերպում նրանք բառակազմական և

⁵ Այս բառաձևերում կա երեք հերթագայություն՝ դուռըն-դրան (ու/ը, ու/ը, ը/ա), որոնցից առաջին երկուսը վերաբերում են մեր կողմից տարբերակված (2) տեսակին, իսկ վերջինը, ինչպես արդեն նշվել է, (3) տեսակին:

քերականական գործընթացների արդյունք են, որոնք նախապես առաջացել են իբրև հնչյունական տարբերակներ (այլահնչակներ), ապա վերածվել ինքնուրույն հնչույթների⁶, իսկ համաժամանակյա հայեցակերպում այդ հերթագայությունները համապատասխան ձևակերպի առաջացման միջոց են: Երկրորդ տիպի հերթագայությունները, որպես ինքնին իմաստակիր միավորներ, ձևույթներ են: Եթե առաջին երկու տիպի հերթագայությունները արժեքավորվում են միայն համապատասխան ձևակերպի կազմում, իսկ ձևակերպից դուրս նրանցից յուրաքանչյուրը տվյալ լեզվի հնչույթային համակարգի բաղադրիչ է, ապա երրորդ տիպի հերթագայությունների բաղադրիչները առանձնաբար գիտակցվում են խոսողների կողմից, օր.՝ -ու-ն որպես եզ. թ. սեռ. հոլ. ցուցիչ՝-Ø (մարդ/-ու), -ի (ոսկ/-ի/-ու), -ուց (ոսկ/-ուց), -ով (ոսկ/-ով) ձևերի հետ ունեցած հակադրություններում, ռուս. ու-ն՝ ա-ի (рука) կամ е -ի (руке) հետ ունեցած հակադրության, անգլ. [i:]-ն (geese)՝ [u:]-ի (goose) հետ հակադրության մեջ:

Այս առումով, իհարկե, յուրահատուկ է ներքին թեքմամբ արտահայտվող հերթագայությունների ձևային հարմարման արժեքի հարցը: Դրանց հերթագայիչները միաժամանակ արմատի մաս են կազմում, հետևաբար, որպես այդպիսին, հնչույթներ են, երկբարբառներ կամ երկհնչյուններ (հմմտ. շուն/շան, մայր/մար, աստ(ը)ղ/աստեղ, արին/արեան, mous [maus] «մուկ»/mice [mais] «մկներ», louse [laus] «ոջիլ»/lice [lais] «ոջիլներ», goose [gu:s] «սագ»/geese [gi:s] «սագեր» և այլն): Սկզբունքորեն նրանք կարող են ձևավորել հակադրական հարաբերություններ, ինչպես՝ մայր/մոր (<մոր<մար) և մեր (մենք դերանվան սեռ. հոլ.): Միաժամանակ նրանք օժտված են քերականական նշանակությամբ (արտահայտում են հոլովի, թվի կամ կերպի քերականական իմաստ), հետևաբար նաև ձևույթներ են: Սակայն, ի տարբերություն արտաքին թեքման ձևային-մասնիկների, օր.՝ -ի, -ու, -ոջ, -վա ևն, ներքին թեքման հերթագայիչները ինքնին նշանակության կրող չեն, որովհետև համապատասխան արմատների կազմից դուրս նրանք ինքնին ընկալելի չեն որպես որոշակի գործառնություն օժտված բաղադրիչներ, իսկ համապատասխան արմատների կազմում նրանց իրականացրած գործառնությունը որքան ձևա-

⁶ Հնչյուն↔հնչույթ անցման առնչությամբ նախորդ դարի կեսերին, երբ հնչույթաբանությունը որոնումների և բուռն զարգացման ընթացքի մեջ էր, Ե. Կուրիլովիչը գրում է. «...հնչույթաբանության ոլորտում մինչև այժմ չի ստացվել այն հարցի պատասխանը, թե ինչու են որոշ դեպքերում երկու հնչույթ ձգտում հեռանալ մեկը մյուսից՝ ստեղծելով համակցային տարբերակներ, իսկ ուրիշ դեպքերում, ընդհակառակը, տարբերակներն անհետանում են: Գուցե պատասխանը պիտի փնտրել լեզվաբանությունից դուրս՝ որպես այդպիսին» (Е. Курилович, Аллофоны и алломорфы // Очерки по лингвистике, М., 1962, էջ 44): 1968թ. ռուս լեզվաբան Ս. Բ. Բեռնշտեյնը հնչույթների «կազմավորումն ու քայքայումը» փորձում է ցույց տալ մասնակի օրինակով, թե ինչպես է նախապատկանական լեզվի [g]-ն [ē]-ին նախորդող դիրքում, հետնաքմայինների առաջին քմայնացման պայմաններում փոխվել [ʒ]-ի, իսկ հետո՝ [ʒ]-ի. gēr-> žēr-: Հետագայում այդ դիրքում [ē]-ն փոխվել է [a]-ի՝ žēr->žar-: Արդյունքում [ʒ]-ն հայտնվել է հետին շարքի [a] ձայնավորից առաջ, այսինքն՝ [ʒ]-ն արդեն կարող էր գործածվել այն նույն դիրքերում, ինչ և [g]-ն՝ žare, բայց ugare: Այդ ճանապարհով առաջացել է նոր [ʒ] հնչույթը» (տե՛ս С. Б. Бернштейн, նշվ. աշխ., էջ 47):

բանական է (բառաձևի կազմավորում), նույնքան էլ հնչույթաբանական (բառակազմական բաղադրիչի կազմավորում): Ներքին հերթագայության բաղադրիչները քերականական, հետևաբար նաև ձևային ծանրաբեռնվածություն ձեռք են բերում միայն հարացույցի մեջ (հմմտ. տուն-տան, արին-արեան, *называть-назвать, убежать-убежать, mous-mice, tooth-teeth* ևն): Ուստի մաքուր ներքին թեքման (հերթագայության) բաղադրիչները միայն ամբողջության մեջ՝ որպես հերթագայական համալիր են իրենց գործառական արժեքով մոտենում քերականական ձևային: Սա նշանակում է, որ լեզվական/լեզվաբանական կարգավիճակով ներքին հերթագայությունները բնութագրվում են զգալիորեն մոտ են առաջին՝ բառակազմությանը ուղեկցող (*песок-песочный, зюль-з(у)ль*, կին-կանացի, թույն-թունավոր) և հատկապես երկրորդ՝ ձևաբանական գործընթացներին ուղեկցող (*писать-пишу, искать-ищу, село-сёла, գիր-գ(ը)րի, կին-կ(ը)նոջ*) տիպի հերթագայություններին: Ավելի ճիշտ՝ միջին դիրք են գրավում դրանց և երրորդ՝ ինքնին քերականական իմաստ արտահայտողների միջև, այն է՝ ձևակազմական առումով նման են (1) և (2), իսկ գործառական առումով՝ (3) տեսակին:

Հորվական համակարգում անցումը մաքուր քերականությունից մաքուր կցականության աստիճանական բնույթ ունի: Դա կարելի է ցույց տալ հայերենի հետևյալ օրինակներով. 1) շուն//շան, 2) հոգի//հոգու, 3) մարդ//մարդու: Եթե այս շարքում առաջինը մաքուր ներքին թեքում է, իսկ երկրորդը մաքուր արտաքին թեքում է (-ի-ն արմատի բաղադրիչ է), ապա երրորդի դեպքում *թեքում* կամ *հերթագայություն* տերմինը տեղին չի լինի, քանզի *մարդ* ձևին Յ վերջավորության (իմա՝ ձևային) վերագրումը պայմանական բնույթ ունի:

Աստիճանական անցումներն առհասարակ բնորոշ են լեզվին այն պարզ պատճառով, որ լեզուն բաց համակարգ է, մշտապես գտնվում է «շարժման» (փոփոխության) ընթացքի մեջ: Հնչյունական համակարգում այդպիսիք են, օրինակ, երկբարբառ (երկբարբառակերպ)/եռբարբառ ↔ հնչյուն/երկհնչյուն անցումները (հմմտ. գրք. աւ>ժ. հյ.՝ n([o]) - մատ>մոտ [մօտ],- եւ>յու կամ իւ>յու-առեւծ>առյուծ, սին>սյուն,- է(<եյ)>ե-գէս>գես, սէր>սեր, եււ>յո-արդեարք>արդյոք),- ֆրնս.՝ *ai>ε* (հմմտ. *claire* [kle:r] «լուսավոր», *maison* [mɛʒɔ] «տուն»), *eau>o* (հմմտ. *eau* ([ø]) «ջուր», *beaucoup* [bocu] «շատ»), *au>o* (հմմտ. *haut* [o] «բարձր»), *au>ɔ* (հմմտ. *mauvais* [mɔvɛ] «վատ»),- գրմ.՝ *uo>ū* (հմմտ. *muot>Mut* «արիություն, քաջություն») ևն: Հակառակ ուղղվածության են գրմ.՝ *i>ai* (հմմտ. *îs>ais* «Eis» «սառույց»), *ū(ü)>ai* (հմմտ. *hūs>haus* «տուն, բնակարան», *rūch>Rauch* «ծուխ»), *ū>eu* (հմմտ. *hūsir>Häuser* «տներ») ևն⁷: Այդպիսիք են նաև բառապաշարում՝ հարանունները (հմմտ. պահպանել-պաշտպանել, գործուն-գործոն, զգացում-զգացմունք, արհեստ-արվեստ ևն), ձևաբանության մեջ՝ միաձուլությունը (հմմտ. գրք. անձինք-հոգն. ք., ուղղ. հ., հուն. λυ´ω «արձակում եմ, ազատում եմ» - եզ. ք., 1-ին դ., սահմ. եղ., ներկա ժ., - βλε´πετε -

⁷ Տե՛ս **В. М. Жирмунский**, Общие тенденции фонетического развития германских языков // Общее и германское языкознание, Л., 1976, էջ 277-298:

«տեսնում եք»՝ հոգն. ք., 2-րդ դ., ներկա ժ., սահմ. եղ., ռուս. *руками*- հոգն. ք., գործ. հ.,- լատ. *vocant* - «նրանք կանչում են» - հոգն. ք., 3-րդ դ., ներկա ժ., սահմ. եղ. և) և խոսքամասային անցումները (հմմտ. խոս/ել-խոս/ք, փայտ-փայտյա, կուսակցական (գոյ.) - կուսակցական «որևէ քաղաքական կազմակերպության պատկանող» - ած., օր.՝ «կուսակցական գործիչ»), - շարահյուսության մեջ՝ *բառածև/բայածև* (ձևաբանական պլան) → *նախադասություն* (շարահյուսական պլան) անցումները (հմմտ. Չնկատվեց (օր. *(միջադեպը) չնկատվեց (հյուրերի կողմից)*, հուն. $\gamma\iota\nu\omega\sigma\kappa\omega$ «ես գիտեմ», լատ. *rides* (*ridere*) «դու ծիծաղում ես», *sumus* (*esse*-ից «լինել»)- «(մենք) ենք» ևն, - ռուս. **(ОН) вернется** «(նա) կվերադառնա» ևն):

Նշանագիտական հայեցակերպում ևս հերթագայությունների երեք տեսակները տարարժեք են. առաջիններն օժտված են միայն արտահայտության պլանով (նշանակիչով), իսկ երրորդը՝ և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններով (նշանակիչ և նշանակյալ): Հետևաբար, առաջինները միակողմանի, իսկ երկրորդները երկկողմանի լեզվական միավորներ են:

Մեր վերլուծությունից հետևում է, որ ձևակազմական (=ձևույթակազմական) և գործառական հատկանիշներով (1) և (2) տիպի հերթագայությունները համարժեք են, հետևաբար, լեզվական համակարգում նրանք ունեն միևնույն կարգավիճակը, այն է՝ *ձևահնչույթաբանական*, ինչպես բնորոշել է նաև Ն. Ս. Տրուբեցկոյը⁸: Ձևակազմական հայեցակերպում սրանց հետ ընդհանուր են (3) տիպին վերաբերող ներքին թեքման հերթագայությունները, որոնք, սակայն, նրանցից տարբերվում են գործառական հայեցակերպում, հետևաբար լեզվական համակարգում նրանց կարգավիճակը լիովին չի նույնանում ո՛չ առաջին երկու տիպի և ո՛չ էլ (3) տիպի արտաքին թեքման (մասնիկավորումով արտահայտվող) հերթագայությունների հետ: Այս դեպքում, սակայն, նախընտրելի ենք համարում, նկատի ունենալով նաև լեզվաբանական ավանդույթը, դրանք վերագրել ձևաբանությանը: Իսկ արտաքին թեքումով արտահայտվող հերթագայությունները հստակորեն ձևաբանական բնույթ ունեն, նրանց հերթագայիչները քերականական ձևույթներ են:

Ինչպես արդեն նշվել է, շատերը, ընդունելով ձևահնչույթաբանական հերթագայությունների առկայությունը հատկապես զարգացած թեքական կառուցատիպ ունեցող լեզուներում և տարբերակելով դրանք քննող առանձին լեզվաբանական բաժին կամ ենթաբաժին՝ հնչույթաբանության և ձևաբանության միջև, մերժում են ձևահնչույթի գաղափարը՝ մասնավորապես նկարագրման պարզությամբ չհատկանշվելու հիմնավորումով⁹: Իհարկե, սա միակ դեպքը չէ: Ըստ էության, համանման իրավիճակ առկա է նաև *շարույթի* և *շարույթաբանության* տարբերակման դեպքում: Շարույթի գաղափարը ևս, չնայած ավելի քան հարյուրամյա վաղեմությանը, մինչև

⁸ Տե՛ս **Н. С. Трубецкой**, Морфонологическая система русского языка // Избранные труды по филологии, М., 1987, էջ 67-142:

⁹ Տե՛ս, օրինակ, **Ю. С. Степанов**, նշվ. աշխ., էջ 112: Ստեպանովի կարծիքը կարող է դիտվել որպես ձևահնչույթի գաղափարը մերժողների ընդհանրական ձևակերպում:

օրս ստանում է ամենատարբեր մեկնաբանություններ և ավելի հաճախ մերժվում է նրա օբյեկտիվությունը՝ որպես լեզվական կամ խոսքային միավոր, որովհետև ակնհայտ չեն, օրինակ, շարույթը բառից (բառաձևից) և բառակապակցությունից սահմանագատող չափանիշները:

Ձևահնչոյթաբանական հերթագայությունների (ՉՀՀ) լեզվաբանական կարգավիճակի տեսանկյունից կարևոր է նրանց լեզվակա^օն, թե^օ խոսքային հայեցակերպին պատկանելության հարցը: ՉՀՀ բաղադրիչներից յուրաքանչյուրը մասնակցում է որևէ ձևակի կազմավորմանը: Ձևակը ձևային կիրառական, հետևաբար՝ խոսքային տարբերակն է: Սակայն ՉՀՀ ուսումնասիրության առարկան ոչ թե առանձին հերթագայիչն է, այլ՝ նրանց ամբողջությունը, այսինքն՝ <к/ч>, <г/з/ж>, <г/з>, <ի/ա/ը> ևն համալիրը: Եթե ՉՀՀ համալիրը կառուցվածքային և գործառական հատկանիշներով համեմատենք հնչոյթի, ձևային և բառի հետ՝ որպես լեզվաբանության մեջ համընդհանուր ընդունելություն գտած լեզվական միավորների, ապա կպարզվի հետևյալ պատկերը: *Գործառական պլանում* ա) ինչպես նշված միավորներին, ՉՀՀ համալիրին ևս բնորոշ են խոսքային հայեցակերպի համապատասխանները (հմմտ. [з]-ն կամ [ж]-ն <г/з/ж>, (друз-/друж-), [с]-ն կամ [ш]-ն <с/ш> (пис(-ать)-пиш(-у), [н]-ն կամ [р]-ն <н/р> (դուռն/դրան ևն). բ) նշանագիտական առումով միակողմանի է, ինչպես հնչոյթը. ունի միայն արտահայտության պլան և մասնակցում է բովանդակային պլանի ձևավորմանը: *Կառուցվածքային պլանում* ա) ձևայինները լինում են ինչպես միահնչոյթ (հմմտ. անգլ. -s՝ հոգն. բ. ցուցիչ (book/s-«գրքեր»),- ռուս. -е՝ եզ. ք., տր. հոլ. ցուցիչ (рук/e- «ձեռքի(ն)»), -а՝ իգ. սեռի ցուցիչ (толкнул(а) (она) - «հրեց»),- գրք. -u՝ հոգն. ք., հայց. հոլ. (գ)հարսունս-«հարսներ(ը)», - ժ. հյ. -ի՝ եզ. ք., սեռ.-տր. հոլ. (թվ/ի) ևն), այնպես էլ բազմահնչոյթ (հմմտ. անգլ. -er-writer «գրող», -y՝ flowery «ծաղկուն»), ֆրանս. -ons՝ disons «ասում ենք», -iss՝ finissez «վերջացնում եք», -ment՝ lentment «դանդաղորեն», ռուս. -ск-՝ учитель-ск-ий «ուսուցչական», -ист-՝ болот-ист-ый «ճահճային», при-՝ прибежать «վազել (որևէ տեղ)», - ժ. հյ. ենթ-՝ ենթադաս, -ացու՝ հարսնացու ևն): Մա նշանակում է, որ այս առումով նրանց միջև միօրինակություն (=պարզություն) չկա, սակայն, չնայած դրան, բոլորն էլ ձևայիններ են, որովհետև ապահովված է գործառական հատկանիշը՝ բոլորն էլ իմաստակիր նվազագույն միավորներ են. բ) բառի հիմնական հատկանիշները մեկը շեշտակիր լինելն է, սակայն կան բառեր, որոնք գուրկ են բառային շեշտից (նախդիրները՝ ռուս. под «տակ», на(д) «վրա», об «մասին», через «միջով, միջոցով» ևն,- ժ. հյ. կապերը՝ դեպի, միասին, հետ, վրա, առաջ ևն,- գրք. ընդ, վասն, զի,- ֆրանս. en՝ գործածվում է ժամանակ ցույց տվող բառերի հետ (en etc «ամռանը»),- անգլ. of (արտահայտում է պատկանելություն)՝ of the city «քաղաքի/ն (պատկանող)», for «համար», or «կամ», at «մեջ, վրա, մոտ, դեպքում» ևն): Այս համգամանքը չի խանգարում, որպեսզի նշված կարգի լեզվական միավորները ևս համարվեն բառեր, որովհետև դրանք ունեն բառին բնորոշ մյուս հատկանիշները: Եմ օժանդակ բայը ինքնուրույն բայաձև է, սակայն «խոսում են» խոնարհված ձևում այն «խոսում» անկատար դերբայի հետ

նախադասության մեկ անդամ է և որպես այդպիսին՝ համարժեք է, օրինակ, «խոսեցի» (կատարյալ) համադրական ձևին: Նշվածները ևս ցույց են տալիս, որ բառի, որպես լեզվական հիմնական միավորի դեպքում նույնպես ամեն ինչ «հարթ» չէ. այս դեպքում էլ գործում է «ամեն օրենք ունի իր բացառություն(ներ)ը» ասույթը¹⁰:

Այս առումով ուշագրավ են նաև ներմարմնավորյալ (инкорпорированный) կառուցատիպի լեզուների բառ-նախադասությունները, որոնցում, ըստ էության, մեկ բազմաբարդ բառային համալիրով արտահայտվում է տարաբնույթ հարաբերություններով ստորոգական կապ¹¹:

Կառուցվածքային պլանում ՉՀՀ համալիրի բնութագրման դժվարությունը պայմանավորված է հենց գործառական և նշանագիտական պլաններում նրա դրսևորած «ոչ լիարժեք» պահվածքով. *այն ձևակազմիչ գործառույթ իրականացնող հնչույթների ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը համապատասխան ձևակի կազմում դրսևորվում է խոսքային հայեցակերպի իր համարժեքով*: Հետևաբար, այն վերացարկված միավոր է կամ խոսքային հայեցակերպում նյութականորեն արտահայտվող հերթագայական բաղադրիչների տիպ: Այս բնութագրով ՉՀՀ համալիրը մեծ ընդհանրություն ունի հնչույթի հետ. եթե հնչույթը խոսքային հայեցակերպում արտահայտվող նյութական նվազագույն միավորների՝ հնչյունների (կամ այլահնչակների) վերացարկված տիպն է լեզվական հայեցակերպում, ապա ՉՀՀ համալիրը տարբեր հնչույթների վերացարկված տիպն է: Այստեղից հետևում է, որ հնչույթային հերթագայությունների շարքով ներկայացված ձևույթը ևս որոշակի վերացարկում է, որովհետև խոսքային հայեցակերպում այն արտահայտվում է տարբեր ձևակերպով. ինչպես՝ կին/-կան/-կըն-, տուգ/տուժ-, սուն/-սան-, **виж-/-вид-**, (**вижу/видишь**) ևն: Նկարագրման դժվարությունն առավելապես գրաֆիկական է, որի լուծումը մեթոդաբանական հարց է: Այդպիսի տարբերակ առաջարկել է, օրինակ, Ջ. Հառիսը: Վերջինս ՉՀՀ համալիրը նշանակել է ձևույթի հիմնական տարբերակում ներկայացված հնչույթով, ինչպես <F>-ն անգլերենի *knife* [naif] «դանակ»//*knives* [naivɪz] «դանակներ» բառաձևերում առկա <f/v> հերթագայության համար¹²:

Ասվածից հետևում է, որ ձևահնչույթի գաղափարը՝ առնվազն որպես ձևահնչույթաբանական հերթագայությունների վերացարկված տիպ, հիմնավոր է:

Ձևահնչույթաբանական հերթագայության բնույթի հաստատումը կանխորոշում է նաև նրա տեղը լեզվաբանական ստորակարգության մեջ:

¹⁰ Թերևս նաև այս պատճառով են դեակրիատիվ լեզվաբանության ներկայացուցիչները (և ոչ միայն նրանք) խուսափում բառի տարբերակումից՝ որպես լեզվական կառուցվածքի միավոր, և բառային միավորները քննում են իբրև ձևույթի դրսևորման ձևեր (տե՛ս **Л. Блумфилд**, *Язык*, М., 1968, **Г. Глисон**, *Введение в дескриптивную лингвистику*, М., 1959):

¹¹ Տե՛ս օրինակ **П. Я. Скорик**, *О постепенном развертывании и совершенствовании основ грамматического строя [на материале чукотского языка] // Введение в языкознание*, М., 2005, էջ 513-533:

¹² Տե՛ս **Ю. С. Степанов**, նշվ. աշխ., էջ 111-112: Իսկ ձևույթի հիմնական տարբերակը ճշտելու համար տե՛ս **В. Б. Касевич**, նշվ. աշխ., էջ 34-54:

Իհարկե, ամենից տրամաբանական լուծումներից մեկը հենց ձևահնչության արանձնացումն է՝ որպես լեզվաբանական բաժին: Սակայն դա ունի մեկ անպատեհություն. այդ դեպքում, ըստ էության, տրամախաչվում են *ձևաբանության (մորֆեմիկա)* և *ձևահնչության (մորֆոնոլոգիա)* ուսումնասիրության ոլորտները, քանզի վերջին հաշվով ձևահնչությամբ՝ որպես ձևակերպողի բաղադրիչ, մտնում է ձևաբանության ընդգրկման ոլորտի մեջ, հետևաբար՝ նաև ձևաբանության: Ձևահնչության արանձնացումը բառակազմությանը առնչվում է ոչ թե անմիջականորեն, այլ ձևաբանության միջնորդությամբ: Հետևաբար ճիշտ կլինի ձևահնչության արանձնացումը հերթագայությունները քննել բառակազմության բաժնում՝ ձևաբանական իրողությունների համատեքստում:

В. З. ПЕТРОСЯН — *Лингвистический статус морфемы и морфонологии.* — Понятие морфемы приняли не многие лингвисты, несмотря на то, что факт морфонологических чередований не отвергнут почти никем. В статье делается попытка обосновать реальное существование морфемы как языковой единицы: таковой надо считать чередующийся комплекс с формообразующей (=основообразующей) функцией, элементы которого отдельно принадлежат к речи. Признание морфемы дает основание выделить и морфонологию как составную лингвистики, изучающий морфонологические чередования. Целесообразно морфонологию включить в словообразование как один из его подразделов.